



«Լավագույն կին-գործարար»

ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության հայեցակարգ

ՀՀ կառավարությունը 2010 թվականի փետրվարի 11-ի N5 արձանագրային որոշմամբ հավանության արժանացրեց «Գենդերային քաղաքականության հայեցակարգը», հաստատելով իր հավատարմությունը գենդերային հավասարության գաղափարախոսությանը: Վերջինը ենթադրում է հավասար պայմանների և հնարավորությունների ստեղծում կանանց և տղամարդկանց անհատական ներուժի դրսևորման համար՝ ի նպաստ երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացմանը:

Հաշվի առնելով վիճակագրական տվյալները, որոնք փաստում են տնտեսության մեջ կին-գործատուների թվի գրեթե 8 անգամ զիջումը տղամարդ-գործատուների թվին, ՀՀ վարչապետին կից Կանանց խորհուրդն առաջարկեց խրախուսել և հանրահռչակել գործարար կանանց: Ի կատարումն 2011 թվականի նոյեմբերի 25-ին ՀՀ վարչապետի մոտ կայացած նիստի N 14.8/[97580]-11 արձանագրության հանձնարարականի ստորև ներկայացվում է «Լավագույն կին-գործարար» ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության հայեցակարգը 2013 թվականի համար:

Միևնույն ժամանակ նպատակ հետապնդելով բարելավել կանանց ձեռնարկատիրական կարողությունները և բարձրացնել ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը կին գործարարների համար՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը Ասիական զարգացման բանկի (ADB) հետ համատեղ 2013թ-ից նախաձեռնել է «Կանանց ձեռներեցության աջակցության ծրագիրը», որի շրջանակներում ևս կխրախուսվեն լավագույն կին գործարարները:

I. Մրցանակաբաշխության էությունը

ՀՀ տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական գործունեության և նախաձեռնողականության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումները ըստ արժանավույնս գնահատման, հանրահռչակման և սատարման նպատակով **ՀՀ վարչապետը հայտարարում է մրցանակաբաշխություն**, որը կազմակերպում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ի դեմս Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի: Մրցանակաբաշխությունը կարող են մասնակցել Երևան քաղաքում և ՀՀ մարզերում սեփականության իրավունքով 50 տոկոս և ավելի բաժնեմաս ունեցող ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կանայք (ինչպես նաև ձեռնարկությունների կին գործադիր տնօրեններ):

Մրցանակաբաշխությունը անցկացվում է **հետևյալ 6 ուղղություններով**.

1. «Լավագույն կին գործատու» անվանակարգի հիմնական չափորոշիչներն են.

- աշխատատեղերի քանակը վերջին 3 տարում,
- աշխատողների ընդհանուր թվում կանանց մասնաբաժինը վերջին 3 տարում (%-ով),
- աշխատողների (բացառությամբ տնօրենի և փոխտնօրենների) միջին աշխատավարձը վերջին 3 տարում,
- թողարկված արտադրանքի/մատուցված ծառայությունների ծավալը վերջին 3 տարում,

- աշխատողների խրախուսմանն/մոտիվացմանն ուղղված միջոցառումները:
2. **«Լավագույն կին նորարար նախաձեռնող»** անվանակարգին կարող են մասնակցել այն կանայք, որոնք ներդրել են նորոգարություն իրենց բիզնեսում կամ նախաձեռնել նորարար/ստեղծագործ բիզնես: Անվանակարգի հիմնական չափորոշիչներն են.
- նախաձեռնության/նորարարության նկարագիրը և/կամ յուրահատկությունը,
 - կատարված ներդրումների ծավալը վերջին 3 տարում,
 - թողարկված արտադրանքի/մատուցված ծառայությունների ծավալը վերջին 3 տարում,
 - աշխատատեղերի քանակը վերջին 3 տարում:
3. **«Լավագույն կին բարեգործ»** անվանակարգի հիմնական չափորոշիչներն են.
- բարեգործությանն ուղղված գումարը վերջին 3 տարում,
 - բարեգործության հիմնական ուղղվածությունը՝ շահառուները և/կամ ստացող կազմակերպությունները,
 - պետական սոցիալական ներառյալ առողջապահական, կրթական, մշակութային և այլ ծրագրերին մասնակցությունը,
 - շրջապատի և/կամ համայնքի տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացումը,
 - իրականացված բարեգործական ծրագրերը հավաստող փաստաթղթերի/նյութերի (պայմանագրեր, հրամաններ, փաստն արձանագրող իրավական ակտեր, պատվոգրեր, շնորհակալագրեր, հողվածներ, նկարներ, տեսաերիզներ և այլ) առկայությունը:
4. **«Կին արտադրողի լավագույն ապրանքանիշ»** անվանակարգի հիմնական չափորոշիչներն են.
- ապրանքանիշի անվանումը,
 - ապրանքանիշը կրող արտադրատեսակների կամ մատուցված ծառայությունների անվանացանկը,
 - ապրանքանիշի/ծառայության ներկայացվածությունը և ճանաչելիությունը հանրապետության առևտրական ցանցերում (նաև արտասահմանում),
 - ապրանքանիշը կրող ֆիրմային խանութի առկայությունը:
5. **«Լավագույն երիտասարդ կին գործարար»** անվանակարգին կարող են մասնակցել մինչև 35 տարեկան երիտասարդ կին գործարարները: Անվանակարգի հիմնական չափորոշիչներն են.
- կազմակերպության հիմնադրման տարեթիվը,
 - աշխատատեղերի քանակը վերջին 3 տարում,
 - աշխատողների ընդհանուր թվում կանանց մասնաբաժինը վերջին 3 տարում (%-ով),
 - աշխատողների (բացառությամբ տնօրենի և փոխտնօրենների) միջին աշխատավարձը վերջին 3 տարում,
 - թողարկված արտադրանքի/մատուցված ծառայությունների ծավալը վերջին 3 տարում:

6. «Լավագույն սկսնակ կին գործարար» անվանակարգին կարող են մասնակցել այն կանայք, որոնք նախաձեռնել և գրանցել են իրենց բիզնեսը 2012-2013 թվականների ընթացքում: Անվանակարգի հիմնական չափորոշիչներն են.

- կատարված ներդրումների ծավալը,
- գործարար գաղափարը,
- աշխատատեղերի քանակը
- սեփական գործ հիմնելու հանգամանքը:

II. Մրցանակաբաշխության կազմակերպումը

Մրցանակաբաշխության մասին հայտարարությունը հրապարակվում է Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կայք էջում՝ <http://www.smednc.am> 2013 թվականի մարտի 1-ին: Հայտարարությանը կից տեղադրվում է նաև յուրաքանչյուր անվանակարգի համար նախատեսված հայտի ձևը, որը պետք է լրացվի հայտատուի կողմից և ներկայացվի առցանց մինչև 2013 թվականի մարտի 17-ը:

Մրցանակաբաշխության կազմակերպման կարևոր սկզբունքներն են՝

- յուրաքանչյուր հայտատու կարող է մասնակցել միայն երկու անվանակարգի՝ իր ընտրությամբ,
- յուրաքանչյուր անվանակարգի համար նախատեսվում է երկու մրցանակ՝ Երևան քաղաքի և ՀՀ մարզի լավագույն կին գործարարների համար,
- հայտատուների ընտրությունը կատարում է մրցութային հանձնաժողովը, որը ստեղծվում է ՀՀ վարչապետի որոշմամբ:

Մրցույթի անցկացման ու հայտերի գնահատման կարգը մշակել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ ի դեմս Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և ներկայացրել մրցութային հանձնաժողովի հաստատմանը: Մրցութային հանձնաժողովը՝ ուղղորդվելով իր կողմից հաստատված կարգով, ուսումնասիրում ու գնահատում է հայտերը և արդյունքների հիման վրա առաջարկություն է ներկայացնում ՀՀ վարչապետին: Մրցանակների շնորհման արարողությունը կատարվում է ՀՀ վարչապետի մոտ՝ 2012 թվականի ապրիլի 5-ին:

III. Մրցանակների տեսակները

Մրցանակի հիմնական տեսակը՝ ՀՀ վարչապետի սլաավոգիրն է բոլոր անվանակարգերի համար: Մրցանակաբաշխության մասնակիցներին կտրամադրվեն նաև մրցանակներ/նվերներ (կամ այլ ձևով կիրախուսվեն) ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի, միջազգային կառույցների և այլ կազմակերպությունների կողմից:

Մրցույթի հաղթողների գործունեությունը կներկայացվի նաև հասարակության լայն շրջանակներին՝ զանգվածային լրատվամիջոցներով, մասնավորապես՝ ամսագրերում հոդվածաշարի տեղադրման, «Հրապարակում» հեռուստաձրագրում մրցանակիչների հետ հարցազրույցների կազմակերպման, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կայքում հատուկ էջի թողարկման և այլ միջոցներով: